

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է արտաքին մրցույթ՝ Նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության պետի (ծածկագիր՝ 22-33.10-Ղ3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:**

Արտաքին մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության պետի (ծածկագիր՝ 22-33.10-Ղ3-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք **ծանոթանալ կից:**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության պետի (ծածկագիր՝ 22-33.10-Ղ3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
2. անձնագիր և/ կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ՝ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայական՝ պատճենով,
6. մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
7. համառոտ CV:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի հունիսի 1-ից մինչև 2020 թվականի հունիսի 10-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 9.30-ից 12.30-ը և 14:00-ից 17:00-ը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2020 թվականի հուլիսի 1-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2020 թվականի հուլիսի 3-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի <<Հարցարան>> և <<Աշխատանքային իրավիճակներ>> ձևաչափերով:

Հիմնական աշխատավարձը 310858 (երեք հարյուր տաս հազար ութ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- Մահմանադրություն. հոդվածներ՝ 5,6,14,34,50,179,180,181,182,183,184,185,186,188,189  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>
- «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 3, 5, 7,12  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137135>
- «Գնումների մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 2,6,10,11,15,22-26, 29, 30  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121796>
- «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2,3,4, 6,8,10- 15, 18,19  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137605>
- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 1,3,4, 15, 16  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94473>
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 4, 6, 9, 10.1, 11, 14<sup>1</sup>, 17, 23  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140929>
- «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք.  
հոդվածներ՝ 2,15  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140522>
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2 - 7, 9, 10, 14, 34, 35  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131562>
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 2, 3, 4, 5, 6, 15, 20, 30, 35, 50, 52  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132720>
- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 4, 10, 12, 17, 21, 23, 24, 37  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120807>

- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա. Վ. Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2012, էջեր՝ 5, 38, 40, 54, 98,99

հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>

- «<Գրավոր խոսք>>, Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լինուշ հրատարակչություն, Երևան 2012, էջեր՝ 70, 71, 73, 94-97, 104, 106-110, 114, 124-126,134,137,142,147-148,198-201

հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից մասնավորապես՝

- «Աշխատակազմի կառավարում» կոմպետենցիա, հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/1.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/1.pdf)
- «Որոշումների կայացում» կոմպետենցիա, հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/7.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/7.pdf)
- «Խնդրի լուծումը» կոմպետենցիա, հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/4.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf)

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամարներ՝ 010-511-355, 010-511-316, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

<b>1.Ընդհանուր դրույթներ</b>
<p>1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 22-33.10-Ղ3-1):</p> <p>1.2 Ենթակա և հաշվետու է Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:</p> <p>1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ Վարչության պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի պետերը:</p> <p>1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետերից մեկը:</p> <p>1.5 Աշխատավայրը Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Կառավարության 3 շենք,</p>
<b>2. Պաշտոնի բնութագիրը</b>
<p>2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</p> <ol style="list-style-type: none"><li>1) Ապահովում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների դասակարգման և դրանց անվանացանկի հաշվառման աշխատանքները.</li><li>2) Ապահովում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և դրանց ինժեներական կառույցների վիճակի պարբերական ուսումնասիրությունները,</li><li>3) Ապահովում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման, շինարարության, նորոգման ծրագրերի և միջին նորոգման ծրագրերի նախապատրաստման աշխատանքները (ճանապարհների ծածկի անհարթության միջազգային ինդեքսի ամենամյա մշտադիտարկում, տրնասպորտային միջոցների երթևեկության ինտենսիվության տվյալների հավաքագրում),</li><li>4) Ապահովում է ոլորտի տվյալ բյուջետային տարվա ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,</li><li>5) Ապահովում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների բնագավառի ցուցանիշների վիճակագրական ռեգիստրի վարումը,</li><li>6) Ապահովում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների գույքագրման, շտեմարանի լրացման և վարման աշխատանքները.</li><li>7) Ապահովում է ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում և պաշտպանական գոտում հողերի օգտագործման սահմանափակումները և</li></ol>

նորմերը, սպասարկման օբյեկտների և հաղորդակցուղիների տեղադրման տեխնիկական պայմանների վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքները.

8) Ապահովում է ճանապարհաշինությանն առնչվող նորմատիվ իրավական և նորմատիվ տեխնիկական ակտերի մշակման աշխատանքները.

9) Ապահովում է, ըստ անհարժեշտության, ճանապարհների և դրանց ինժեներական կառույցների վիճակի պարբերական ուսումնասիրությունների մասնակցությունը.

10) Ապահովում է ճանապարհատրանսպորտային պատահարների հաշվառման և առաջարկությունների ներկայացման աշխատանքները,

11) Ապահովում է, ըստ անհրաժեշտության, ճանապարհների և դրանց ինժեներական կառույցների վիճակի պարբերական ուսումնասիրությունների մասնակցությունը,

12) Ապահովում է ճանապարհների ցանցի զարգացման, շինարարության, նորոգման ծրագրերի և միջին նորոգման ծրագրերի նախապատրաստման աշխատանքները (ճանապարհային ծածկի ուսումնասիրություն Ընկնող Քաշով Ճկվածքաչափ (FWD) սարքով),

13) Ապահովում է լաբորատոր և փորձարար-կոնստրուկտորական աշխատանքները (գործող ստանդարտների և նորմերի համաձայն կատարվող հետազոտությունների որակը և ճշգրտությունը, անցկացվող թեմատիկ փորձարկումների և հետազոտությունների աշխատանքը, ընտրում է փորձարկումների անցկացման մեթոդները):

### **Իրավունքները**

- Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների դասակարգման և դրանց անվանացանկում կատարվող փոփոխությունների իրականացման համար պահանջել ներկայացնելու հիմնավորումներ.
- ՀՀ մարզպետարաններից և համայնքապետարաններից պահանջել ներկայացնելու համապատասխան տեղեկատվություն մարզերում գտնվող, ինչպես նաև մարզերի տնօրինության տակ գտնվող ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների վիճակի մասին.
- Համապատասխան մասնագետներից պարբերաբար պահանջել ճանապարհների ծածկի անհարթության միջազգային ինդեքսի ամենամյա մշտադիտարկման, տրնասպորտային միջոցների երթևեկության ինտենսիվության տվյալների հավաքագրման ընթացքի մասին տեղեկատվություն.
- Վերանորոգվող ճանապարհահատվածների ցանկում ընդգրկելու նպատակով ՀՀ մարզպետարանների և համայնքապետարանների կողմից ներկայացված առաջնահերթ և հրատապ հիմնանորոգում պահանջող ճանապարհահատվածների մասին պահանջել լրացուցիչ տեղեկատվություն.
- պահանջելու վիճակագրական ռեգիստրի վարման համար լրացուցիչ տվյալների հավաքագրում.
- պահանջելու Ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում և պաշտպանական գոտում սպասարկման օբյեկտների և հաղորդակցուղիների տեղադրման տեխնիկական պայմաններ տրամադրելու և հողերի օգտագործման վերաբերյալ համապատասխան մարմիններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից լրացուցիչ փաստաթղթեր (ճարտարապետահատակագծային առաջադրանքների, նախագծերի, տեղանքի սխեմաներ և այլն).
- Նորմատիվ իրավական և նորմատիվ տեխնիկական ակտերում կատարվող փոփոխությունների համար պահանջելու ներկայացնելու լրացուցիչ հիմնավորումներ, համապատասխան փաստաթղթեր և նյութեր.
- Վերանորոգվող ճանապարհահատվածների ցանկում ընդգրկելու նպատակով ՀՀ մարզպետարանների և համայնքապետարանների կողմից ներկայացված առաջնահերթ և

հրատապ հիմնանորոգում պահանջող ճանապարհահատվածների մասին պահանջելու լրացուցիչ տեղեկատվություն.

- Համապատասխան մարմնից ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ ստացված տեղեկատվության հետ ծանոթացում.
- ՀՀ մարզպետարաններից և համայնքապետարաններից պահանջել ներկայացնելու համապատասխան տեղեկատվություն մարզերում գտնվող, ինչպես նաև մարզերի տնօրինության տակ գտնվող ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների վիճակի մասին.
- համապատասխան մասնագետներից պարբերաբար պահանջելու լաբորատոր և փորձարարկոնստրուկտորական աշխատանքների ընթացքի մասին տեղեկատվություն.
- վերանորոգվող ճանապարհահատվածների ցանկում ընդգրկելու նպատակով ՀՀ մարզպետարանների և համայնքապետարանների կողմից ներկայացված առաջնահերթ և հրատապ հիմնանորոգում պահանջող ճանապարհահատվածների մասին պահանջելու համապատասխան տեղեկատվություն.
- պահանջելու վիճակագրական ռեգիստրի վարման համար լրացուցիչ տվյալների հավաքագրում.
- պահանջելու համապատասխան մասնագետներից կատարված աշխատանքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն.
- կազմակերպելու հանրային քննարկումներ ոլորտի օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ
- տրանսպորտային փոխադրումներ իրականացնողների ներկայացուցիչների հետ կազմակերպելու առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներ:

### **Պարտականությունները**

- Ուսումնասիրում է վերանորոգմանն առաջարկվող ճանապարհահատվածների ցանկը և ապահովում է նորոգման ծրագրի ներկայացումը անմիջական ղեկավարին.
- համապատասխան մասնագետին հանձնարարում է ամփոփել ՀՀ մարզպետարաններից և համայնքապետարաններից ստացված ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների վիճակի մասին լրացուցիչ տեղեկատվությունը և ապահովում համապատասխան առաջարկության ներկայացումը.
- ամփոփում է ճանապարհների ծածկի անհարթության միջազգային ինդեքսի ամենամյա մշտադիտարկման, տրանսպորտային միջոցների երթևեկության ինտենսիվության տվյալների հավաքագրման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը և արդյունքները ներկայացնում է անմիջական ղեկավարին.
- ճանապարհների ծածկի անհարթության միջազգային ինդեքսի և տրանսպորտային միջոցների երթևեկության ինտենսիվության վերաբերյալ ամփոփ տեղեկատվության տրամադրում.
- քննարկում է ուսումնասիրված տվյալները և ներկայացնում առաջարկություններ պետական ռեգիստրի վարման աշխատանքները ապահովելու համար.
- ճանապարհների գույքագրման վերաբերյալ ամփոփ տեղեկատվության տրամադրում.
- ապահովում է շտեմարանի համապատասխան ենթաբաժնում անհրաժեշտ տվյալների լրացման և վարման աշխատանքները.
- ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների դասակարգման և դրանց անվանացանկում կատարվող փոփոխությունների իրականացման վերաբերյալ անց է կացնում քննարկումներ և ներկայացնում ամփոփ տեղեկատվություն.
- Ապահովում է ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում և պաշտպանական գոտում սպասարկման օբյեկտների և հաղորդակցուղիների տեղադրման տեխնիկական պայմաններ տրամադրելու և հողերի օգտագործման վերաբերյալ համար ներկայացված ամբողջական փաթեթի ուսումնասիրությունը, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մասնագետից պահանջում լրացուցիչ փաստաթղթեր և ապահովում

մասնագիտական եզրակացության տրամադրումը.

- ապահովում է նորմատիվ իրավական և նորմատիվ տեխնիկական ակտերում կատարվող փոփոխությունների վերաբերյալ ամփոփումներ և ներկայացնում առաջարկություններ և հիմնավորումներ.
- ապահովում է ուսումնասիրությունը վերանորոգմանն առաջարկվող ճանապարհահատվածների ցանկի վերաբերյալ և ներկայացնում նորոգման ծրագիրը.
- ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ ստացված նյութերի ուսումնասիրությունը, ամփոփում և տեղեկատվության տրամադրում.
- ստացված տեղեկատվության վերաբերյալ քննարկում և ապահովում համապատասխան նյութերի լրացումը շտեմարանի համապատասխան ենթաբաժնում.
- ապահովում է ամփոփումը ՀՀ մարզպետարաններից և համայնքապետարաններից ստացված ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների վիճակի մասին ստացված տեղեկատվությունը և ապահովում համապատասխան առաջարկության ներկայացումը.
- ամփոփում է լաբորատոր և փորձարար-կոնստրուկտորական աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը, անհրաժեշտության դեպքում՝ իրականացնում քննարկում և ներկայացնում առաջարկություններ.
- ապահովում է լաբորատոր և փորձարար-կոնստրուկտորական աշխատանքների ուսումնասիրությունը (գործող ստանդարտների և նորմերի համաձայն կատարվող հետազոտությունների որակը և ճշգրտությունը, անցկացվող թեմատիկ փորձարկումների և հետազոտությունների աշխատանքը, ընտրում է փորձարկումների անցկացման մեթոդները),
- ճանապարհների ցանցի զարգացման, շինարարության, նորոգման ծրագրերի և միջին նորոգման ծրագրերի նախապատրաստման աշխատանքների ապահովման գործընթացում ուսումնասիրում է հավաքագրված տվյալները, կազմակերպում քննարկումներ և ներկայացնում ամփոփ տեղեկատվություն.
- ամփոփում է քննարկված տեղեկատվությունը և ապահովում ճանապարհների բնագավառի շինարարական նյութերի ցուցանիշների վիճակագրական ռեգիստրի վարումը:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն,

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տրանսպորտի բնագավառում կամ ճարտարագիտության բնակավառում կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության բնագավառում կամ իրավունքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
- 4 Բողոքների բավարարում
5. Հասարակության հետ կապերի ապահովում
6. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
7. Ժամանակի կառավարում

#### **4. Կազմակերպական շրջանակը**

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: